



## **Բանկի բաժնետերերի իրավունքները**

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի /Բանկ/ յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի ստանալ Բանկի վերջին տարեկան ֆինանսական հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները:

Բանկի յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի ստանալու «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված տեղեկությունները /Օրենքը հասանելի է [www.arlis.am](http://www.arlis.am) կայքում/:

Բանկը վերը նշված տեղեկությունները տրամադրում է անվճար՝ բաժնետիրոջ գրավոր դիմումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Գրավոր դիմումը կարող է ներկայացվել հետևյալ ձևերով.

- Առձեռն՝ Բանկի գլխավոր գրասենյակում կամ Բանկի ցանկացած մասնաճյուղում,
- Էլեկտրոնային փոստի միջոցով՝ [hsbc.armenia@hsbc.com](mailto:hsbc.armenia@hsbc.com) հասցեով,
- Փոստային կապի միջոցով հետևյալ հասցեով՝ Տերյան փողոց 66, Երևան, 0009, ՀՀ: